

Պըղետարներ բոլոր յերկրների, միացեք!

ԽՈՐՀԻՄԱՅԻՆ  
ՍՈՑԻԱԼԻՄԱԿԱՆ  
ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ  
ՄԻՈՒԹՅՈՒՆ

ՀԻՄՆԱԿԱՆ  
ՈՐԵՆՔԸ  
(ՍԱՀՄԱՆԴՐՈՒԹՅՈՒՆԸ)



342(47)

Խ-11

Վ Ա . 1933 . Կ Ր Ե Մ Ա

ԽՈՐՀԻՉԱՅԻՆ ՍՈՅԻԱԼԻՍՏԱԿԱՆ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ՄԻԱԼԻԹՅՈՒՆ

342(47)

Խ-11 ան

Պրոլետարյան բուլով բոլղոքների, միացեք!

06 FEB 2011

## ԽՈՐՀԻՉԱՅԻՆ

ՍՈՅԻԱԼԻՍՏԱԿԱՆ

ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ

ՄԻԱԼԻԹՅԱՆ

ՀԻՄՆԱԿԱՆ  
ՈՐԵԿԱՆՔՆԵՐԸ

(ՍԱՀՄԱՆԱԴՐՈՒԹՅՈՒՆԸ)

ՀՅԱՍՏԱԿԱՆԻԹՅՈՒՆ ԽՈՐՀԻՉԱՅԻՆ ՍՈՅԻԱԼԻՍՏԱԿԱՆ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ  
ՄԻԱԼԻԹՅԱՆ ԿԵՆՏՐՈՆԱԿԱՆ ԳՈՐԾՎԱԴԻՐ ԿԻՐ ԿԱՑԻ ԿԱՇԱՐ ԿԱՇԱՐ

Խ Ա Գ Ա Կ Ա Բ Ա ● 1 9 3 3 ● Կ Ա Ջ Ա Կ Ա 1



# Վ Ո Ր Ո Շ Ո Ւ Մ

ԽՈՐՅՈՒԹԻՒՆ ՍՈՑԻԱԼԻՍՏԱԿԱՆ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ՄԻՈՒԹՅԱՆ  
ԽՈՐՅՈՒՐԴՆԵՐԻ 2-րդ ՀԱՄԱԳՈՒՄԱՐԻ

ԽՈՐՅՈՒՐԴՆԵՐԻ ՍՈՑԻԱԼԻՍՏԱԿԱՆ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ՄԻՈՒԹՅԱՆ  
ՀԱՄԱԳՈՒՄԱՐԻ ՈՐԵՆՔԸ (ՍԱՀՄԱՆԱԳՐՈՒԹՅՈՒՆԸ) ՀԱՍՏԱՏԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Լաելով ընկ. Ա. Յեսուկիձեյի գեկոցումը՝ Խորհրդային Սոցիալիստական Հանրապետությունների Միության Հիմնական Որենքը (Սահմանադրությունը) հաստատելու մասին, Խորհրդային Սոցիալիստական Հանրապետությունների Միության Խորհրդուրդների 2-րդ Համագումարը ՎՈՐՈՇՈՒՄ Ե. —

ՀԱՍՏԱՏԵԼ Խորհրդային Սոցիալիստական Հանրապետությունների Միության Հիմնական Որենքը (Սահմանադրությունը), վորն ի կատարումն Խորհրդային Սոցիալիստական Հանրապետությունների Միության Խորհրդուրդների 1-ին Համագումարի բանաձեկի՝ ներկայացված և Խորհրդային Սոցիալիստական Հանրապետությունների Միության Խորհրդուրդների 2-րդ Համագումարի վերջնական հաստատությանը:

Խորհրդային Սոցիալիստական Հանրապետությունների Միության  
Խորհրդուրդների 2-րդ Համագումարի նախագահ՝ Մ. ԿԱՂԻՆԻՆ

Խորհրդային Սոցիալիստական Հանրապետությունների Միության  
Խորհրդուրդների 2-րդ Համագումարի Քարտուղար՝ Ա. ՅԵՍՈՒԿԻՁ

Մոսկվա  
1924 թ. հունվարի 31



Ծր.-Փ. В5 162 × 229  
Ս. Ա. Համար. № А-90600  
Տիրայ 2.600 զ.ք.  
Մ օ ս կ վ ա ռ ա կ  
Г օ զ հ ա կ

8184-53

# ՎՈՐՈՇՈՒՄ

ԽՈՐԴՐԱՅԻՆ ՍՈՑԻԱԼԻՍՏԱԿԱՆ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ՄԻՈՒԹՅԱՆ  
ԿԵՆՏՐՈՆԱԿԱՆ ԳՈՐԾԱԴԻՐ ԿՈՄԻՏԵՑԻ 1-ԻՆ ԳՈՒՄԱՐՄԱՆ 2-ՐԴ  
ՆԱՏԱՋԲԱՆԻ

ԽՈՐԴՐԱՅԻՆ ՍՈՑԻԱԼԻՍՏԱԿԱՆ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ՄԻՈՒԹՅԱՆ  
ՍՍՀՄՍՆՍԴՐՈՒԹՅՈՒՆԸ ԿիրարկութՅԱՆ ԳՆԵԼՈՒ ՄԱՍԻՆ

1. Հաստատել և անմիջապես կիրարկության դնել Խորհրդային Սոցիալիստական Հանրապետությունների Միության Հիմնական Որենքը (Սահմանադրությունը):

2. Խորհրդային Սոցիալիստական Հանրապետությունների Միության Կենտրոնական Գործադիր Կոմիտեյի ներկա նստաշրջանի կողմից Խորհրդային Սոցիալիստական Հանրապետությունների Միության Հիմնական Որենքը (Սահմանադրության) ընդունված բնագիրը ներկայացնել Խորհրդային Սոցիալիստական Հանրապետությունների Միության Խորհրդային 2-րդ Համագումարի վերջնական հաստատությանը:

3. Մինչև Խորհրդային Սոցիալիստական Հանրապետությունների Միության Կենտրոնական Գործադիր Կոմիտեյի կազմվելը, Խորհրդային Սոցիալիստական Հանրապետությունների Միության Սահմանադրության 4 և 5 գլուխների հիման վրա, բոլոր լիազորությունները, վոր Սահմանադրությամբ վերապահված են Խորհրդային Սոցիալիստական Հանրապետությունների Միության Կենտրոնական Գործադիր Կոմիտեյին, հաճանել Խորհրդային Սոցիալիստական Հանրապետությունների Միության Կենտրոնական Գործադիր Կոմիտեյի 1-ին նստաշրջանում 1922 թ. գեկտեմբերի 30 ընտրված Խորհրդային Սոցիալիստական Հանրապետությունների Միության Կենտրոնական Գործադիր Կոմիտեյի 19 անդամից բաղկացած նախագահությանը:

Խորհրդային Սոցիալիստական Հանրապետությունների Միության  
Կենտրոնական Գործադիր Կոմիտեյի նախագահ՝ Մ. ԿԱԼԻՆԻՆ

Խորհրդային Սոցիալիստական Հանրապետությունների Միության  
Կենտրոնական Գործադիր Կոմիտեյի Քարտուղար՝ Ա. ՑԵՆՈՒԿԻՉԵ

Մուկվա, Կրեմլ.  
1923 թ. հունիսի 6.

# ԽՈՐԴՐԴԱՅԻՆ ՍՈՑԻԱԼԻՍՏԱԿԱՆ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ՄԻՈՒԹՅԱՆ ՏՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ՄԻՈՒԹՅԱՆ ՀԻՄՆԱԿԱՆ ՈՐԵՆՔԸ (ՍՍՀՄՍՆՍԴՐՈՒԹՅՈՒՆԸ)

Խորհրդային Սոցիալիստական Հանրապետությունների Միության Կենտրոնական Գործադիր Կոմիտեն, հանդիսավորությամբ հայտարարելով Խորհրդային իշխանության հիմունքների անսասանությունը, ի կատարումն Խորհրդային Սոցիալիստական Հանրապետությունների Միության 1-ին համագումարի վորոշման, ինչպես և Խորհրդային Սոցիալիստական Հանրապետությունների Միության Խորհրդադիր 1-ին Համագումարում Խորհրդային Սոցիալիստական Հանրապետությունների Միություն կազմելու մասին 1922 թ. գեկտեմբերի 30-ին Մուկվայում ընդունված դաշնագիր հիման վրա, և նկատի ունենալով դաշնակից հանրապետությունների կենտրոնական գործադիր կոմիտեների առաջարկած ուղղումներն ու փոփոխումները, ՎՈՐՈՇՈՒՄ ե. —

Խորհրդային Սոցիալիստական Հանրապետությունների Միություն կազմելու մասին գեկլարացիան և Խորհրդային Սոցիալիստական Հանրապետությունների Միություն կազմելու մասին դաշնագիրը կազմում են Խորհրդային Սոցիալիստական Հանրապետությունների Միության Հիմնական Որենքը (Սահմանադրությունը):

## ՀԱՏՎԱԾ ԱՌԱՋԻՆ

ԽՈՐԴՐԴԱՅԻՆ ՍՈՑԻԱԼԻՍՏԱԿԱՆ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ՄԻՈՒԹՅՈՒՆ  
ԿԱԶՄԵԼՈՒ ՄԱՍԻՆ ԴԵԿԼԱՐԱՑԻԱՆ

Խորհրդային հանրապետությունների կազմվելու պահից աշխարհի պետությունները բաժանվել են յերկու բանակի՝ կապիտալիզմի բանակ և սոցիալիզմի բանակ:

Այստեղ՝ կապիտալիզմի բանակում տիրում և ազգային թշնամությունն անհավասարություն, գաղութային ստրկացում և շովինիզմ, ազգային ճնշում և ջարդեր, իմպերիալիստական գաղանություններ և պատերազմներ:

Այստեղ՝ սոցիալիզմի բանակում—փոխադարձ վստահությունն և խաղաղություն, ազգային ազատություն և հավասարություն, ժողովուրդների խաղաղ կենակցություն և յեղայրական գործակցությունն:

Կապիտալիստական աշխարհը տամյակ տարիների ընթացքում փորձել է ազգության հարցը լուծել՝ ազգերի ազատ զարգացումը և մարդուն մարդու կողմից շահագործելու սիստեմը հաշտեցնելու միջոցով, սակայն ապարդյուն։ Ընդհակառակը, ազգային հակասությունների կծիկն ավելի յե խճճվում, սպառնալով կապիտալիզմի հենց գոյությանը։ Բուրժուազիան անզոր գտնվեց ստեղծելու ժողովուրդների գործակցություն։

Միայն խորհուրդների բանակում, միայն պրոլետարիատի գիկտասուրայի պայմաններում, վորը (պրոլետարիատը) իր շուրջն և համախմբել բնակչության մեծամասնությունը, հնարավոր յեղավ արմատախիլ անել ազգային ճնշումը, ստեղծել փոխադարձ վստահության միջնորդ և հիմք գնել ժողովուրդների յեղայրական գործակցության։

Միայն այդ հանգամանքների շնորհիվ խորհրդային հանրապետություններին հաջողվեց յետ մղել ամբողջ աշխարհի՝ ներքին և արտաքին իմպերիալիստների հարձակումը. միայն այդ հանգամանքների շնորհիվ եր, վոր խորհրդային հանրապետությունները կարողացան հաջողությամբ վերջ տալ քաղաքացիական պատերազմին, ապահովել իրենց գոյությունը և դիմել անտեսական խաղաղ շինարարության։

Սակայն պատերազմի տարիներն անյետ չանցան։ Պատերազմից ժառանգություն մնացած ավերված գաշտերը, կանգ առած գործարանները, արտադրական քայլայված ուժերը և անտեսական ցամաքած ռեսուրսները թուլացնում են առանձին հանրապետությունների անջատ ջանքերը անտեսական շինարարության ասպարիզում։ Պարզվեց, վոր ժողովրդական տնտեսության վերականգնումն անհնարին և հանրապետությունների անջատ գոյության ժամանակը։

Մյուս կողմից, միջազգային դրության անկայուն վիճակը և նոր հարձակումների վտանգն անխուսափելի յեն դարձնում կապիտալիստական շրջապատի դեմանդիման խորհրդային հանրապետությունների միասնական ճակատ ստեղծելը։

Վերջապես, խորհրդային իշխանության հենց կառուցվածքը, վորն ինքնին ինտերնացիոնալիստական ե իր դասակարգային բնույթով, դրդում ե խորհրդային հանրապետությունների աշխատավոր մասսաներին կազմել մեկ սոցիալիստական ընտանիք։

Այս բոլոր հանդամանքները հրամայաբար պահանջում են, վոր խորհրդային հանրապետությունները միանան և կազմեն մեկ Դաշնակից պետություն, վորն ընդունակ լինի ապահովել և արտաքին անվտանգությունը, և ներքին տնտեսական առաջադիմությունը, և ժողովուրդների ազգային զարգացման ազատությունը։

Խորհրդային հանրապետությունների ժողովուրդները խորհուրդների իրենց վերջին համագումարներում արտահայտեցին իրենց կամքը, ընդունելով «Խորհրդային Սոցիալիստական Հանրապետությունների Միություն» կազմելու մասին միաձայն վորոշում. այդ կամքը հաստատ յերաշխիք ե, վոր այդ Միությունը համուխանում ե իրավահակասար ժողովուրդների կամավոր միացում, —վոր յուրաքանչյուր հանրապետությանն իրավունք ե վերապահված ազատ դուրս գալ Միությունից, —վոր Միության մեջ կարող են մտնել ինչպես գոյություն ունեցող, նույնակես և ապագայում կազմվելիք բոլոր սոցիալիստական խորհրդային հանրապետությունները, —վոր նոր Դաշնակից պետությունը կհանդիսանա ժողովուրդների՝ դեռ ևս 1917 թ. հոկտեմբերին հիմք դրված խաղաղ կենակցության և յեղայրական գործակցության արժանի պահելը, —վոր նա հաստատուն պատվար կդառնա համաշխարհային կապիտալիզմի դեմ և նոր վճռական քայլ կլինի ամբողջ աշխարհի աշխատավորությանը Համաշխարհային Սոցիալիստական Խորհրդային հանրապետության մեջ միացնելու ճանապարհին։

## ՀԱՏՎԱԾ ՅԵՐԿՐՈՐԴ

ԽՈՐՀԻՄԱՑԻՆ ՍՈՑԻԱԼԻՍՏԱԿԱՆ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՄԻՈՒԹՅՈՒՆ  
ԿԱԶՄԵԼՈՒ ՄԱՍԻՆ ԴԱՇՆԱԳԻՐԸ

Ռուսաստանի Սոցիալիստական Ֆեդերատիվ Խորհրդային հանրապետությունը (ՌՍՖՌՀ), Ռւկաբինայի Սոցիալիստական Խորհրդային հանրապետությունը (ՌԽՍՀ), Բելոռուսիայի Սոցիալիստական Խորհրդային հանրապետությունը (ԲԽՍՀ), Անդրկովկասի Սոցիալիստական Ֆեդերատիվ Խորհ-

դային Հանրապետությունը (Ա.ՍՖԽՀ—Աղբբեջանի Սոցիալիստական Խորհրդային Հանրապետությունը, Վրաստանի Սոցիալիստական Խորհրդային Հանրապետությունը և Հայաստանի Սոցիալիստական Խորհրդային Հանրապետությունը), Թուրքմենստանի Սոցիալիստական Խորհրդային Հանրապետությունը (ԹՄԽՀ), Ուզբեկստանի Սոցիալիստական Խորհրդային Հանրապետությունը (ՈՒՂԽՀ) և Տաջիկստանի Սոցիալիստական Խորհրդային Հանրապետությունը (ՏՄԽՀ) միանում են և կազմում մի Դաշնակից պետություն՝ Խորհրդային Սոցիալիստական Հանրապետությունների Միություն։

### ԳԼՈՒԽ ԱՌԱՋԻՆ

ԽՈԲՀՐԴԱՅԻՆ ՍՈՑԻԱԼԻՍՏԱԿԱՆ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ՄԻՈՒԹՅԱՆ ԽՈԲՀՐԴԱՅԻՆ ԳԵՐԱԳՈՒՅՆ ՄԱՐԴԱԿԱՆԱԿԱՆ ԸՆԴՀԱՆՈՒՐ

1. Խորհրդային Սոցիալիստական Հանրապետությունների Միության իրավասությանը, հանձնս նրա գերազույն մարմինների, յենթակա յեն՝

ա) Միության ներկայացուցչությունը միջազգային հարաբերություններում, դիվանագիտական ամեն տեսակի հարաբերություններ վարելը, ոտար պետությունների հետ քաղաքական և այլ դաշնագրեր կնքելը.

բ) Միության արտաքին սահմանների փոխոխումը, ինչպես նաև դաշնակից հանրապետությունների միջև սահմանների փոխոխման հարցերի կարգավորումը.

շ) Միության մեջ նոր հանրապետություններ ընդունելու մասին դաշնագրեր կնքելը.

դ) պատերազմ հայտարարելն ու հաշտություն կնքելը.

ե) Խորհրդային Սոցիալիստական Հանրապետությունների Միության արտաքին ու ներքին փոխառություններ կնքելը և դաշնակից հանրապետությունների արտաքին ու ներքին փոխառություններ թույլատրելը.

զ) միջազգային դաշնագրերի վակերացումը.

ը) արտաքին առևտրի դեկալարությունը, ներքին առևտրի և մատակարարման սիստեմի սահմանումը.

թ) Միության ամբողջ ժողովրդական տնտեսության հիմունքների և ընդհանուր պլանի սահմանումը, միութենական նշանակություն ունեցող արդյունաբերության ճյուղեր և արդյունաբերական առանձին ճեղմարդկու-

թյուններ վորոշելը, թե միութենական և թե դաշնակից հանրապետությունների անունից կոնցեսիոն պայմանագրեր կնքելը.

ժ) տրանսպորտային և փոստ-հեռագրական գործերի դեկալարությունը.

ի) Խորհրդային Սոցիալիստական Հանրապետությունների Միության դիմաված ուժերի կազմակերպումն ու դեկալարումը.

լ) Խորհրդային Սոցիալիստական Հանրապետությունների Միության միասնական գիտանական պլանի և միասնական պետական բյուջեյի հաստատումը, վորի մեջ մտնում են դաշնակից հանրապետությունների բյուջեները. համամիութենական հարկերի և յեկամուտների, ինչպես և դաշնակից հանրապետությունների բյուջեներ կազմելու համար այդ հարկերից ու յեկամուտներից արվող մամնատրությունների ու նրանց հավելումների սահմանումը. դաշնակից հանրապետությունների բյուջեներ կազմելու համար լրացուցիչ հարկերի և տուրքերի թույլատրումը.

իյ) դրամական և վարկային միասնական սիստեմի հաստատումը.

ժ) Խորհրդային Սոցիալիստական Հանրապետությունների Միության ամբողջ տերիտորիայի վրա հողաշինարարության և հողոգտագործման, նաև ընդերքի, անտառների և ջրերի ոգտագործման ընդհանուր սկզբանական սահմանումը.

կ) միջնահանրապետական գաղթականության մասին համամիութենական որենսգրությունը և գաղթականական ֆոնդի սահմանումը.

և) Միության դատակազմության և դատավարության հիմունքների, նաև քաղաքացիական ու քրեական որենսգրության սահմանումը.

ձ) աշխատանքի մասին հիմնական որենքների սահմանումը.

ղ) ժողովրդական լուսավորության ասպարիգում ընդհանուր սկզբանական սահմանումը.

ճ) ժողովրդական առողջապահության ասպարիգում ընդհանուր հիմունքների սահմանումը.

մ) չափերի և կշռների սիստեմի սահմանումը.

յ) համամիութենական վիճակագրության կազմակերպումը.

ն) հիմնական որենսգրությունը՝ միութենական քաղաքացիության ընագավառում ոտարերկրացիների իրավունքների վերաբերմամբ.

շ) Միության ամբողջ տերիտորիայի վրա տարածվող ամսիստիայի իրավունքը.

ո) դաշնակից հանրապետությունների խորհուրդների համագումարների և կենտրոնական գործադիր կոմիտեների՝ այս Սահմանադրությունը խախտող վորոշումների վերացումը.

չ) դաշնակից հանրապետությունների միջև ծագող վիճելի հարցերի լուծումը:

2. Այս Սահմանադրության հիմնական սկզբունքների հաստատության և փոփոխության իրավունքը բացառապես պատկանում է Խորհրդային Սոցիալիստական Հանրապետությունների Միության Խորհրդադիր համագումարին:

#### ԳԼՈՒԽ ՅԵՐԿՐՈՐԴ

ԴԱՇՆԱԿԻՑ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ԳԵՐԱԿԱՆ ԻՐԱՎՈՒՆՔՆԵՐԻ ՅԵՎ ՄԻԱՅՆԹԵՆԱԿԱՆ  
ՔԱՂԱՔԱՅԻՆ ՅԻՈՒԹՅԱՆ ՄԱՍԻՆ

3. Դաշնակից հանրապետությունների գերակայությունը սահմանափակված է միայն այս Սահմանադրության մեջ մատնանշված սահմաններով և միայն Միության իրավասության վերաբերյալ հարցերով։ Այդ սահմաններից գուրք յուրաքանչյուր դաշնակից հանրապետություն իրագործում և իր պետական իշխանությունն ինքնուրույն կերպով։ Խորհրդային Սոցիալիստական Հանրապետությունների Միությունը պահպանում է դաշնակից հանրապետությունների իրավունքները։

4. Յուրաքանչյուր դաշնակից հանրապետությանը վերապահվում է Միությունից ազատողների դուրս գալու իրավունքը։

5. Դաշնակից հանրապետությունները, այս Սահմանադրության համապատասխան, փոփոխություններ են մտցնում իրենց սահմանադրությունների մեջ։

6. Դաշնակից հանրապետությունների տերիսորիան չի կարող փոփոխության յենթարկվել առանց իրենց համաձայնության։ Նմանապես 4-րդ հոդվածի փոփոխման, սահմանափակման կամ վերացման համար պահանջվում է Խորհրդային Սոցիալիստական Հանրապետությունների Միության մեջ մտնող բոլոր հանրապետություններ։

7. Դաշնակից հանրապետությունների քաղաքացիների համար սահմանվում է միութենական միասնական քաղաքացիություն։

#### ԳԼՈՒԽ ՅԵՐԿՐՈՐԴ

ԽՈՐՀԻԹԱՅԻՆ ՍՈՅԻԱԼԻՍՏԱԿԱՆ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ՄԻԱՅՆԹՅԱՆ ԽՈՐՀՈՒԹՅԱՆ ՀԱՄԱԳՈՒՄԱՐԸ

8. Խորհրդային Սոցիալիստական Հանրապետությունների Միության իշխանության գերազույն մարմինն է հանդիսանում Խորհրդների համագումարը, իսկ Խորհրդադիր կամագումարների միջանկյալ ժամանակամիջոցում — Խորհրդային Սոցիալիստական Հանրապետությունների Միության կենտրոնական Գործադիր կոմիտեն, վոր բաղկացած է Միութենական Խորհրդից և Ազգությունների Խորհրդից։

9. Խորհրդային Սոցիալիստական Հանրապետությունների Միության Խորհրդների համագումարը կազմվում է՝ քաղաքային խորհրդների ու քաղաքային բնակավայրերի խորհրդների ներկայացուցիչներից — յուրաքանչյուր 25.000 ընտրողից մեկ պատգամավոր, և գյուղական խորհրդների ներկայացուցիչներից — յուրաքանչյուր 125.000 բնակչից մեկ պատգամավոր։

10. Խորհրդային Սոցիալիստական Հանրապետությունների Միության Խորհրդների համագումարի պատգամավորներն ընտրվում են՝

ա) անմիջորեն՝ յերկրային և մարզային բաժանում չունեցող դաշնակից հանրապետությունների խորհրդների համագումարում, թ) յերկրային և մարզային բաժանում ունեցող դաշնակից հանրապետությունների յերկրային և մարզային խորհրդների համագումարներում։ Աղբբեջանի վրաստանի և Հայաստանի խորհրդային սոցիալիստական հանրապետությունների խորհրդների համագումարներում, նաև յերկրային ու մարզային միավորությունների մեջ մտնող և թե՛ չմտնող ինքնավար հանրապետությունների ու մարզերի խորհրդների համագումարներում։

11. Խորհրդային Սոցիալիստական Հանրապետությունների Միության Խորհրդների հերթական համագումարները հարավիրում են Խորհրդային Սոցիալիստական Հանրապետությունների Միության կենտրոնական Գործադիր կոմիտեն յերկու տարին մեկ անգամ։ արտակարգ համագումարները հրավիրում է Խորհրդային Սոցիալիստական Հանրապետությունների Միության կենտրոնական Գործադիր կոմիտեն իր սեփական վորոշումով, Միութենական Խորհրդի, Ազգությունների Խորհրդի, կամ թե՛ յերկու դաշնակից հանրապետությունների պահանջով։

12. Արտակարգ հանգամանքներում, յերբ արգելքներ են լինում Խորհրդային Սոցիալիստական Հանրապետությունների Միության Խորհրդային Խորհրդային Սոցիալիստական Հանրապետությունների Խորհրդային Սոցիալիստական Հանրապետությունների Միության Կենտրոնական Գործադիրի Կոմիտեյին իրավունքը և վերապահվում հետաձգել Համագումար հրավիրելը:

### ԳԼՈՒԽ ԶՈՐՅՈՐԴ

ԽՈՐՀԻԱՅԻՆ ՍՈՅՑԱԼԻՍՏԱԿԱՆ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ՄԻՈՒԹՅԱՆ  
ԿԵՆՏՐՈՆԱԿԱՆ ԳՈՐԾԱԴԻՐԻ ԿՈՄԻՏԵՅԻ ՄԱՍԻՆ

13. Խորհրդային Սոցիալիստական Հանրապետությունների Միության Կենտրոնական Գործադիր Կոմիտեն բաղկացած է Միութենական Խորհրդից և Ազգությունների Խորհրդից:

14. Խորհրդային Սոցիալիստական Հանրապետությունների Միության Խորհրդների Համագումարն ընտրում է դաշնակից հանրապետությունների ներկայացուցիչներից Միութենական Խորհրդ՝ այդ հանրապետությունների յուրաքանչյուրի բնակչության թվի համեմատական չափով՝ Խորհրդային Սոցիալիստական Հանրապետությունների Միության Խորհրդների Համագումարի վորոշած քանակով:

15. Ազգությունների Խորհրդը կազմվում է դաշնակից ու ինքնավար խորհրդային սոցիալիստական հանրապետությունների ներկայացուցիչներից՝ յուրաքանչյուրի 5-ական ներկայացուցչից, և ինքնավար մարզերի ներկայացուցիչներից՝ յուրաքանչյուրի 1-ական ներկայացուցչից։ Ազգությունների Խորհրդի կազմն ամբողջությամբ հաստատում է Խորհրդային Սոցիալիստական Հանրապետությունների Միության Խորհրդների Համագումարը։

16. Միութենական Խորհրդը և Ազգությունների Խորհրդը քընում են այն բոլոր դեկրետները, որինսպաքերն ու վորոշումները, վորոնք ստացվում են Խորհրդային Սոցիալիստական Հանրապետությունների Միության Կենտրոնական Գործադիր Կոմիտեյի նախագահությունից և Ժողովրդական Կոմիտարների Խորհրդից, Միության առանձին ժողովրդական կոմիտարիատներից, դաշնակից հանրապետությունների կենտրոնական գործադիր կոմիտեներից, ինչպես և Միութենական Խորհրդի ու Ազգությունների Խորհրդի նախաձեռնությամբ ներկայացվածները։

17. Խորհրդային Սոցիալիստական Հանրապետությունների Միության Կենտրոնական Գործադիր Կոմիտեն հրատարակում է որենսպաքերը, գեկրետները, վորոշումները և կարգադրությունները, միավորում և Խորհրդային Սոցիալիստական Հանրապետությունների Միության որենսպաքության ու կասավարչության աշխատանքը և վորոշում և Խորհրդային Սոցիալիստական Հանրապետությունների Միության Կենտրոնական Գործադիր Կոմիտեյի նախագահության և Ժողովրդական Կոմիտարների Խորհրդի գործունեյության ըրջանակը։

18. Այն բոլոր դեկրետներն ու վորոշումները, վորոնք սահմանում են Խորհրդային Սոցիալիստական Հանրապետությունների Միության քաղաքական ու տնտեսական կյանքի վերաբերյալ ընդհանուր նորմեր, նաև մտցնում են Խորհրդային Սոցիալիստական Հանրապետությունների Միության պետական մարմինների աշխատանքի մեջ հիմնական փոփոխություններ, — անպայման պետք և քննվեն և հաստատվեն Խորհրդային Սոցիալիստական Հանրապետությունների Միության Կենտրոնական Գործադիր Կոմիտեյի կողմից։

19. Կենտրոնական Գործադիր Կամիտեյի հրատարակած բոլոր դեկրետների, վորոշումների և կարգադրությունների անմիջական կատարումը պարտադիր և Խորհրդային Սոցիալիստական Հանրապետությունների Միության ամբողջ տերիտորիայի վրա։

20. Խորհրդային Սոցիալիստական Հանրապետությունների Միության Կենտրոնական Գործադիր Կոմիտեն իրավունք ունի կասեցնել կամ վերացնել Խորհրդային Սոցիալիստական Հանրապետությունների Միության Կենտրոնական Գործադիր Կոմիտեյի նախագահության, ինչպես նաև դաշնակից հանրապետությունների խորհրդների համագումարների ու կենտրոնական գործադիր կոմիտեների և Խորհրդային Սոցիալիստական Հանրապետությունների Միության տերիտորիայի վրա գոնվող իշխանության այլ մարմինների գեկրետները, վորոշումներն ու կարգադրությունները։

21. Խորհրդային Սոցիալիստական Հանրապետությունների Միության Կենտրոնական Գործադիր Կոմիտեյի հերթական նախաշրջանները հրավիրում ե Կենտրոնական Գործադիր Կոմիտեյի նախագահությունը՝ Խորհրդային Սոցիալիստական Հանրապետությունների Միության Խորհրդների հերթական Համագումարների միջանկյալ ժամանակաշրջանում առնվազն յերեք անգամ։ Արտակարգ նախաշրջանները հրավիրվում են Խորհրդային

Սոցիալիստական Հանրապետությունների Միության Կենտրոնական Գործադիր Կոմիտեյի Նախագահության վրոշումով, Միութենական Խորհրդի Նախագահության կամ Ազգությունների Խորհրդի Նախագահության պահանջով, ինչպես և մեկ գաշնակից հանրապետության կենտրոնական գործադիր կոմիտեյի պահանջով:

22. Խորհրդային Սոցիալիստական Հանրապետությունների Միության Կենտրոնական Գործադիր Կոմիտեյին ի քննություն ներկայացված որինագծերն որենքի ուժ են ստանում միայն այն գեղքում, յեթե նրանք ընդունվել են թե Միութենական Խորհրդի և թե Ազգությունների Խորհրդի կողմից, ու հարապարակվում են Խորհրդային Սոցիալիստական Հանրապետությունների Միության Կենտրոնական Գործադիր Կոմիտեյի անունից:

23. Միութենական Խորհրդի և Ազգությունների Խորհրդի միջև տարածայնություններ ծագելու գեղքում, հարցը հանձնվում է դրանց կազմած համաձայնական հանձնաժողովին:

24. Համաձայնական հանձնաժողովում համաձայնության չգալու դեպքում, հարցը տեղափոխվում է Միութենական Խորհրդի և Ազգությունների Խորհրդի միացյալ նիստ ի քննություն։ Միութենական Խորհրդի կամ Ազգությունների Խորհրդի ձայների մեծամասնություն չստացվելու գեղքում, հարցը կարող ե այդ մարմիններից մեկի պահանջով հանձնվել Խորհրդային Սոցիալիստական Հանրապետությունների Միության Խորհուրդների հերթական կամ արտակարգ Համագումարին ի լուծումն։

25. Միութենական Խորհուրդը և Ազգությունների Խորհուրդը՝ իրենց նստաշրջանները նախապատրաստելու և այդ նստաշրջանների աշխատանքները դեկավարելու համար ընտրում են իրենց նախագահությունները՝ յուրաքանչյուրն 9 անդամից բաղկացած։

26. Խորհրդային Սոցիալիստական Հանրապետությունների Միության Կենտրոնական Գործադիր Կոմիտեյի նստաշրջանների միջանկյալ ժամանակմիջոցում իշխանության գերագույն մարմին և հանդիսանում Կենտրոնական Գործադիր Կոմիտեյի կողմից կազմված՝ 27 անդամից բաղկացած Խորհրդային Սոցիալիստական Հանրապետությունների Միության Կենտրոնական Գործադիր Կոմիտեյի նախագահությունը, վորի մեջ մտնում են Միութենական Խորհրդի և Ազգությունների Խորհրդի նախագահություններն իրենց լրիվ կազմով։

Խորհրդային Սոցիալիստական Հանրապետությունների Միության Կենտրոնական Գործադիր Կոմիտեյի նախագահություն և Ժողովրդական Կոմիտեների Խորհրդային կազմելու համար (այս Սահմանադրության 26 և 37 հոդվածները) հրավիրվում է Միութենական Խորհրդի և Ազգությունների Խորհրդի միացյալ նիստ։ Միութենական Խորհրդի և Ազգությունների Խորհրդի միացյալ նիստում քվեարկությունը կատարվում է Միութենական Խորհրդի և Ազգությունների Խորհրդի միացյալ նիստում քվեարկությունը կատարվում է Միութենական Խորհրդի և Ազգությունների Խորհրդի մողմից առանձին։

27. Կենտրոնական Գործադիր Կոմիտեն Խորհրդային Սոցիալիստական Հանրապետությունների Միության Կենտրոնական Գործադիր Կոմիտեյի նախագահության անդամների կազմից՝ գաշնակից հանրապետությունների թվի չափով ընտրում է Խորհրդային Սոցիալիստական Հանրապետությունների Միության Կենտրոնական Գործադիր Կոմիտեյի նախագահներ։

28. Խորհրդային Սոցիալիստական Հանրապետությունների Միության Կենտրոնական Գործադիր Կոմիտեն պատասխանատու յե Խորհրդային Սոցիալիստական Հանրապետությունների Միության Խորհրդային Համագումարի առաջ։

#### ԳԼՈՒԽ ՀԻՆԳԵՐՈՐԴ

ԽՈՐՀԴԱՅԻՆ ՍՈՑԻԱԼԻՍՏԱԿԱՆ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ՄԻՈՒԹՅՈՒՆ  
ԿԵՆՏՐՈՆԱԿԱՆ ԳՈՐԾԱԴԻՐ ԿՈՄԻՏԵՅԻ ՆԱԽԱԳԱՀՈՒԹՅԱՆ ՄԱՍԻՆ

29. Խորհրդային Սոցիալիստական Հանրապետությունների Միության Կենտրոնական Գործադիր Կոմիտեյի նախագահությունը Խորհրդային Սոցիալիստական Հանրապետությունների Միության Կենտրոնական Գործադիր Կոմիտեյի նստաշրջանների միջանկյալ ժամանակամիջոցում հանդիսանում է Խորհրդային Սոցիալիստական Հանրապետությունների Միության իշխատանքների որենսդիր, գործադիր և անորին մարմինը։

30. Խորհրդային Սոցիալիստական Հանրապետությունների Միության Կենտրոնական Գործադիր Կոմիտեյի նախագահությունը հսկում է Խորհրդային Սոցիալիստական Հանրապետությունների Միության Սահմանադրությունների Կենսագործման և Խորհրդային Սոցիալիստական Հանրապետությունների Միության Խորհրդային Համագումարի ու Կենտրոնական Գործադիր Կոմիտեյի բոլոր վորոշումները իշխանության բոլոր մարմինների կողմից կատարելու վրա։

31. Խորհրդային Սոցիալիստական Հանրապետությունների Միության Կենտրոնական Գործադիր Կոմիտեյի նախագահությունն իրավունք ունի

կասեցնել և վերացնել Խորհրդային Սոցիալիստական Հանրապետությունների Միության ժողովրդական կոմիսարների Խորհրդի ու առանձին ժողովրդական կոմիսարիատների, ինչպես նաև դաշնակից հանրապետությունների կենտրոնական գործադիր կոմիտեների և ժողովրդական կոմիսարների խորհուրդների վորոշումները:

32. Խորհրդային Սոցիալիստական Հանրապետությունների Միության կենտրոնական Գործադիր կոմիտեյի Նախագահությունն իրավունք ունի կասեցնել դաշնակից հանրապետությունների խորհուրդների համագումարների վորոշումները, հետագայում ներկայացնելով այդ վորոշումները Խորհրդային Սոցիալիստական Հանրապետությունների Միության կենտրոնական Գործադիր կոմիտեյին ի քննություն և ի հաստատություն:

33. Խորհրդային Սոցիալիստական Հանրապետությունների Միության կենտրոնական Գործադիր կոմիտեյի Նախագահությունը հրատարակում է դեկրետներ, վորոշումներ և կարգադրություններ, քննում ու հաստատում և ժողովրդական կոմիսարների Խորհրդի, Խորհրդային Սոցիալիստական Հանրապետությունների Միության առանձին գերատեսչությունների, դաշնակից հանրապետությունների կենտրոնական գործադիր կոմիտեների, սրանց նախագահությունների և իշխանության այլ մարմինների կողմից ներկայացված դեկրետների ու վորոշումների նախագծերը:

34. Խորհրդային Սոցիալիստական Հանրապետությունների Միության կենտրոնական Գործադիր կոմիտեյի, նրա Նախագահության և ժողովրդական կոմիսարների Խորհրդի դեկրետներն ու վորոշումները տպագրվում են դաշնակից հանրապետությունների ընդհանուր գործածական լեզուներով [ուղարկեն, ուկրաիներեն, բելոռուսերեն, վրացերեն, հայերեն, թուրքերեն, ուզբեկերեն, թուրքմեներեն և տաջիկերեն (ֆարսերեն)]:

35. Խորհրդային Սոցիալիստական Հանրապետությունների Միության կենտրոնական Գործադիր կոմիտեյի Նախագահությունը վճռում ե՝ մի կողմից՝ Խորհրդային Սոցիալիստական Հանրապետությունների Միության ժողովրդական կոմիսարների Խորհրդի ու Խորհրդային Սոցիալիստական Հանրապետությունների Միության ժողովրդական կոմիսարիատների, և մյուս կողմից՝ դաշնակից հանրապետությունների կենտրոնական գործադիր կոմիտեների ու նրանց նախագահությունների փոխհարաբերության վերաբերյալ հարցերը:

36. Խորհրդային Սոցիալիստական Հանրապետությունների Միության կենտրոնական Գործադիր կոմիտեյի Նախագահությունը պատասխանատու յե Խորհրդային Սոցիալիստական Հանրապետությունների Միության կենտրոնական Գործադիր կոմիտեյի առաջ:

#### ԳԼՈՒԽ ՎԵՅՏԵՐՈՐԴ

ԽՈՐՀԻԴԱՅԻՆ ՍՈՅԻՄԱԿԱՆ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ՄԻՈՒԹՅՈՒՆՆ ԺՈՂՈՎՐԴԱԿԱՆ ԿՈՄԻՄԱՐԴԱՐԱԿԱՆ ԽՈՐՀԻԴԱՅԻՆ ՄԱԿԱՐԱՆ

37. Խորհրդային Սոցիալիստական Հանրապետությունների Միության ժողովրդական կոմիսարների Խորհրդուրդը հանդիսանում է Խորհրդային Սոցիալիստական Հանրապետությունների Միության կենտրոնական Գործադիր կոմիտեյի գործադիր ու տնօրին մարմինը և կազմվում է Խորհրդային Սոցիալիստական Հանրապետությունների Միության կենտրոնական Գործադիր կոմիտեյի կողմից հետեւյալ կազմով.

Խորհրդային Սոցիալիստական Հանրապետությունների Միության ժողովրդական կոմիսարների Խորհրդի և Աշխատանքի ու Պաշտպանության Խորհրդի նախագահը.

Նախագահի տեղակալներ.

Պետական Պանային Հանձնաժողովի նախագահ.

Արտաքին Գործերի ժողովրդական կոմիսար.

Ռազմական և Ծովային Գործերի ժողովրդական կոմիսար.

Արտաքին Առելքտրի ժողովրդական կոմիսար.

Հաղորդակցության ճանապարհների ժողովրդական կոմիսար.

Զրային Տրանսպորտի ժողովրդական կոմիսար.

Փոստ և Հեռագրատների ժողովրդական կոմիսար.

Բանվորա-Գյուղացիական Տեխնության ժողովրդական կոմիսար.

Ժողովրդական Տնտեսության Գերագույն Խորհրդի նախագահ.

Հողագործության ժողովրդական կոմիսար.

Աշխատանքի ժողովրդական կոմիսար.

Մատակարարման ժողովրդական կոմիսար.

Ֆինանսների ժողովրդական կոմիսար:

38. Խորհրդային Սոցիալիստական Հանրապետությունների Միության ժողովրդական կոմիսարների Խորհրդային Սոցիալիստական Հանրապետությունների Միության ժողովրդական կոմիսարների Խորհրդային Սոցիալիստական Հան-



րապետությունների Միության կենտրոնական Գործադիր Կոմիտեի կողմից նրան վերապահված իրավունքների սահմաններում և Խորհրդային Սոցիալիստական Հանրապետությունների Միության Ժողովրդական Կոմիսարների Խորհրդի վերաբերյալ կանոնադրության հիման վրա, հրատարակում ե գեղեցիներ և վորոշումներ, վորոնց կատարումը պարտադիր և Խորհրդային Սոցիալիստական Հանրապետությունների Միության ամբողջ տերիտորիայի վրա:

39. Խորհրդային Սոցիալիստական Հանրապետությունների Միության Ժողովրդական Կոմիսարների Խորհուրդը քննում թե Խորհրդային Սոցիալիստական Հանրապետությունների Միության առանձին Ժողովրդական Կոմիսարիատների և թե դաշնակից հանրապետությունների կենտրոնական գործադիր կոմիտեների ու նրանց նախագահությունների կողմից ներկայացրած դեկրետները և վորոշումները:

40. Խորհրդային Սոցիալիստական Հանրապետությունների Միության Ժողովրդական Կոմիսարների Խորհուրդն իր ամբողջ գործունեյության համար պատասխանատու յե Խորհրդային Սոցիալիստական Հանրապետությունների Միության կենտրոնական Գործադիր Կոմիտեյի և նրա նախագահության առաջ:

41. Խորհրդային Սոցիալիստական Հանրապետությունների Միության Ժողովրդական Կոմիսարների Խորհրդի վորոշումներն ու կարգադրությունները կարող են կասեցվել և վերացվել Խորհրդային Սոցիալիստական Հանրապետությունների Միության կենտրոնական Գործադիր Կոմիտեյի և նրա նախագահության կողմից:

42. Դաշնակից հանրապետությունների կենտրոնական գործադիր կոմիտեները և նրանց նախագահությունները բողոքարկում են Խորհրդային Սոցիալիստական Հանրապետությունների Միության կենտրոնական Գործադիր կոմիտեյի առաջ Խորհրդային Սոցիալիստական Հանրապետությունների Միության Ժողովրդական Կոմիսարների ու վորոշումները, չկասեցնելով նրանց կատարումը:

#### ԳԼՈՒԽ ՑՈԹԵՐՈՐԴ

ԽՈՐՀԻԴԱՅԻՆ ՍՈՅԻՍԱՀԱՍԱԿԱՆ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ՄԻՈՒԹՅԱՆ ԳԵՐԱԳՈՒՅՆ  
ԳԱՏԱՐԱՆԻ ՄԱՍԻՆ

43. Խորհրդային Սոցիալիստական Հանրապետությունների Միության տերիտորիայի վրա հեղափոխական որինականություն հաստատելու նպա-

տակով, Խորհրդային Սոցիալիստական Հանրապետությունների Միության կենտրոնական Գործադիր կոմիտեյին կից հիմնվում է Գերագույն Դատարան, վորի իրավասության և վերաբերում՝

ա) տալ դաշնակից հանրապետությունների գերագույն դատարաններին համամիութենական որենադրության հարցերի վերաբերյալ դեկավար պարզաբանություններ.

բ) Խորհրդային Սոցիալիստական Հանրապետությունների Միության դատախազի առաջարկությամբ քննել և Խորհրդային Սոցիալիստական Հանրապետությունների Միության կենտրոնական Գործադիր կոմիտեյի առաջ բողոքարկել դաշնակից հանրապետությունների գերագույն դատարանների վորոշումները, վճիռներն ու դատավճիռները, յեթե դրանք հակառակ են համամիութենական որենադրությանը և կամ շոշափում են ուրիշ հանրապետությունների շահերը.

գ) Խորհրդային Սոցիալիստական Հանրապետությունների Միության կենտրոնական Գործադիր կոմիտեյի պահանջով Սահմանադրության տեսակետից յեղակացություններ տալ դաշնակից հանրապետությունների այս կամ այն վորոշման որինականության մասին.

դ) լուծել դաշնակից հանրապետությունների միջև ծագող դատական վեճերը.

ե) քննել Միության բարձրագույն պաշտոնեական անձանց ի պաշտոնե կատարած հանցագործությունների վերաբերյալ մեղադրական գործերը:

44. Խորհրդային Սոցիալիստական Հանրապետությունների Միության Գերագույն Դատարանը գործում ե հետևյալ կազմով՝

ա) Խորհրդային Սոցիալիստական Հանրապետությունների Միության Գերագույն Դատարանի պլենար.

բ) Խորհրդային Սոցիալիստական Հանրապետությունների Միության Գերագույն Դատարանի քաղաքացիական-դատական և քրեական-դատական կոլեգիաներ.

գ) գինվորական կոլեգիա.

դ) տրամապորտային գործերի կոլեգիա:

45. Խորհրդային Սոցիալիստական Հանրապետությունների Միության Գերագույն Դատարանի պլենար հետևյալ կազմն ունի՝ Գերագույն Դատարանի նախագահը, նրա տեղակալը, դաշնակից հանրապետությունների գերագույն դատարանների պլենար նիստերի նախագահը, Խոր-

հրդային Սոցիալիստական Հանրապետությունների Միության Գերագույն Դատարանի կողեգիաների նախագահները և Խորհրդային Սոցիալիստական Հանրապետությունների Միության Կենտրոնական Գործադիր Կոմիտեյի Նախագահության կողմից նշանակված չորս անդամը, վորոնց թվում և Խորհրդային Սոցիալիստական Հանրապետությունների Միության Միացյալ Պետական Քաղաքական Վարչության մեկ ներկայացուցիչը: Գերագույն Դատարանի նախագահներն և նրա տեղակալին նշանակում և Խորհրդային Սոցիալիստական Հանրապետությունների Միության Կենտրոնական Գործադիր Կոմիտեն:

46. Խորհրդային Սոցիալիստական Հանրապետությունների Միության Գերագույն Դատարանի դատախազին, և նրա տեղակալին նշանակում և Խորհրդային Սոցիալիստական Հանրապետությունների Միության Կենտրոնական Գործադիր Կոմիտեյի Նախագահությունը: Խորհրդային Սոցիալիստական Հանրապետությունների Միության Գերագույն Դատարանի դատախազը պարտավոր և Խորհրդային Սոցիալիստական Հանրապետությունների Միության Գերագույն Դատարանի լուծման յենթակա բոլոր հարցերի վերաբերյալ յեղակացություններ տալ նրա նիստերում մեղադրականը հիմնավորել և, Խորհրդային Սոցիալիստական Հանրապետությունների Միության Գերագույն Դատարանի պլենար նիստի վորոշումների հետ համաձայն չլինելու դեպքում, բոլորարկել այդ վորոշումները Խորհրդային Սոցիալիստական Հանրապետությունների Միության Կենտրոնական Գործադիր Կոմիտեյին:

47. 43-րդ հոդվածում մատնանշված հարցերը Խորհրդային Սոցիալիստական Հանրապետությունների Միության Գերագույն Դատարանի պլենար նիստին ի քննություն ուղարկելու իրավունքը բացառապես պատկանում և Խորհրդային Սոցիալիստական Հանրապետությունների Միության Կենտրոնական Գործադիր Կոմիտեյին, նրա նախագահությանը, Խորհրդային Սոցիալիստական Հանրապետությունների Միության Գերագույն Դատարանի դատախազին, դաշնակից հանրապետությունների դատախազներին և Խորհրդային Սոցիալիստական Հանրապետությունների Միության Միացյալ Պետական Քաղաքական Վարչությանը:

48. Միության Գերագույն Դատարանի պլենար նիստերը կազմում են դատական հատուկ ատյաններ (կազմեր), քննելու համար՝

ա) բացառիկ կարևորություն ունեցող քրեական և քաղաքացիական այն գործերը, վորոնք իրենց բովանդակությամբ շոշափում են յերկու կամ մի քանի դաշնակից հանրապետություններին, և

բ) Խորհրդային Սոցիալիստական Հանրապետությունների Միության Կենտրոնական Գործադիր Կոմիտեյի և ժողովրդական Կոմիսարների Խորհրդի անդամների անդամական դատի յենթակայության գործերը:

Խորհրդային Սոցիալիստական Հանրապետությունների Միության Գերագույն Դատարանն այդ գործերը քննության և առնում՝ ամեն անգամ բացառապես Խորհրդային Սոցիալիստական Հանրապետությունների Միության Կենտրոնական Գործադիր Կոմիտեյի կամ նրա նախագահության հատուկ վորոշումների հիման վրա:

#### ԳԼՈՒԽ ՈՒԹԵՐՈՐԴԻ

ԽՈՐՀՐԴԱՅԻՆ ՍՈՑԻԱԼԻՍՏԱԿԱՆ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ՄԻՈՒԹՅՈՒՆՆ ԺՈՂՈՎՐԴԻԱԿԱՆ ԿՈՄԻՄԱՐՏԱԲԵՐԻ ՄԱՍԻՆ

49. Խորհրդային Սոցիալիստական Հանրապետությունների Միության ժողովրդական Կոմիսարների Խորհրդի իրավասության յենթակա պետական կառավարչության առանձին ճյուղերն անմիջաբար դեկավարելու համար կազմվում են 12 ժողովրդական կոմիսարիատներ, վորոնք մատնանշված են այս Սահմանադրության 37-րդ հոդվածում, և գործում են Խորհրդային Սոցիալիստական Հանրապետությունների Միության Կենտրոնական Գործադիր Կոմիտեյի կողմից հաստատված՝ ժողովրդական կոմիսարիատների վերաբերյալ Կանոնադրությունների հիման վրա:

50. Խորհրդային Սոցիալիստական Հանրապետությունների Միության ժողովրդական կոմիսարիատները բաժանվում են՝

ա) համամիութենական ժողովրդական կոմիսարիատների, վորոնք միասնական են ամբողջ Խորհրդային Սոցիալիստական Հանրապետությունների Միության համար.

բ) Խորհրդային Սոցիալիստական Հանրապետությունների Միության միացյալ ժողովրդական կոմիսարիատների:

51. Խորհրդային Սոցիալիստական Հանրապետությունների Միության համամիութենական ժողովրդական կոմիսարիատներ են հանդիսանում՝

Արտաքին Գործերի ժողովրդական կոմիսարիատը.

Ռազմական և Ծովային Գործերի ժողովրդական կոմիսարիատը.

Արտաքին Առևտրի Ժողովրդական Կոմիսարիատը.

Հաղորդակցության ծանապարհների Ժողովրդական Կոմիսարիատը.

Զրային Տրանսպորտի Ժողովրդական Կոմիսարիատը.

Փոստ և Հեռագրատների Ժողովրդական Կոմիսարիատը:

52. Խորհրդային Սոցիալիստական Հանրապետությունների Միության միացյալ Ժողովրդական Կոմիսարիատներ են հանդիսանում՝

Ժողովրդական Տնտեսության Գերագույն Խորհուրդը.

Հողագործության Ժողովրդական Կոմիսարիատը.

Աշխատանքի Ժողովրդական Կոմիսարիատը.

Մատակարարման Ժողովրդական Կոմիսարիատը.

Ֆինանսների Ժողովրդական Կոմիսարիատը.

Բանվորա-Գյուղացիական Տեսչության Ժողովրդական Կոմիսարիատը:

53. Խորհրդային Սոցիալիստական Հանրապետությունների Միության համամիութենական Ժողովրդական Կոմիսարիատները դաշնակից հանրապետություններում ունեն լիազորներ, վորոնք անմիջորեն նրանց են յենթարկվում:

54. Խորհրդային Սոցիալիստական Հանրապետությունների Միության միացյալ Ժողովրդական Կոմիսարիատի մարմիններ են հանդիսանում դաշնակից հանրապետությունների համանուն Ժողովրդական Կոմիսարիատները, վորոնք իրագործում են նրա առաջադրությունները դաշնակից հանրապետությունների տերիտորիայի վրա:

55. Խորհրդային Սոցիալիստական Հանրապետությունների Միության Ժողովրդական Կոմիսարիատների գլուխ են կանոնած Ժողովրդական Կոմիսարների խորհրդի անդամները—Խորհրդային Սոցիալիստական Հանրապետությունների Միության Ժողովրդական Կոմիսարները:

56. Յուրաքանչյուր Ժողովրդական Կոմիսարին կից և նրա նախագահությամբ կազմվում ե կոլեգիա, վորի անդամներին նշանակում ե Խորհրդային Սոցիալիստական Հանրապետությունների Միության Ժողովրդական Կոմիսարների Խորհրդը:

57. Ժողովրդական Կոմիսարն իրավունք ունի միանձնաբար վորոշում կայացնել բոլոր այն հարցերի վերաբերյալ վորոնք յենթակա յեն համապատասխան Կոմիսարիատի իրավասության, տեղեկացնելով այդ մասին կոլեգիային: Ժողովրդական Կոմիսարի այս կամ այն վորոշման հետ համաձայն չինելու դեպքում, կոլեգիան կամ նրա առանձին անդամները, չկասե-

ցնելով վորոշման կատարումը, կարող են գանգատարկել այդ վորոշումը Խորհրդային Սոցիալիստական Հանրապետությունների Միության Ժողովրդական Կոմիսարների Խորհրդին:

58. Խորհրդային Սոցիալիստական Հանրապետությունների Միության առանձին Ժողովրդական Կոմիսարիատների կարգադրությունները կարող են վերացնել Խորհրդային Սոցիալիստական Հանրապետությունների Միության հետարոնական Գործադիր Կոմիտեյի նախագահությունը և Ժողովրդական Կոմիսարների Խորհրդը:

59. Խորհրդային Սոցիալիստական Հանրապետությունների Միության Ժողովրդական Կոմիսարիատների կարգադրությունները կարող են կասեցնել դաշնակից հանրապետությունների կենտրոնական գործադիր Կոմիտեները կամ նրանց նախագահությունները, յեթե ավել կարգադրությունը ակնհայտ կերպով չի համապատասխանում Միութենական Սահմանադրությանը, Միության որենսդրությանը կամ դաշնակից հանրապետությունների որենսդրությանը: Կարգադրությունը կասեցնելու մասին դաշնակից հանրապետությունների կենտրոնական գործադիր Կոմիտեները կամ նրանց նախագահությունները անմիջապես հաղորդում են Խորհրդային Սոցիալիստական Հանրապետությունների Միության Ժողովրդական Կոմիսարների Խորհրդին և Խորհրդային Սոցիալիստական Հանրապետությունների Միության համապատասխան ժողովրդական կոմիսարին:

60. Խորհրդային Սոցիալիստական Հանրապետությունների Միության Ժողովրդական Կոմիսարները պատասխանատու յեն Խորհրդային Սոցիալիստական Հանրապետությունների Միության Ժողովրդական Կոմիսարների Խորհրդի, կենտրոնական Գործադիր Կոմիտեյի և նրա նախագահության առաջ:

### ԳԼՈՒԽ ԻՆՆԵՐՈՐԴ

ՄԻԱՅՅԱԼ, ՊԵՏԱԿԱՆ ՔԱՂԱՔԱԿԱՆ ՎԱՐՉՈՒԹՅԱՆ ՄԱՍԻՆ

61. Քաղաքական և տնտեսական հակա-հեղափոխության, լրտեսության և բանդիտիզմի դեմ պայքարելու գործում դաշնակից հանրապետությունների հեղափոխական ջանքերը միացնելու նպատակով, Խորհրդային Սոցիալիստական Հանրապետությունների Միության Ժողովրդական Կոմիսարների Խորհրդին կից կազմակերպվում ե Միացյալ Պետական Քաղաքական Վարչություն (ՈԳՊՈՒ), վորի նախագահը խորհրդակցական ձայնի

իրավունքով մտնում և Խորհրդային Սոցիալիստական Հանրապետություն-ների Միության ժողովական կոմիսարների Խորհրդի կազմի մեջ:

62. Խորհրդային Սոցիալիստական Հանրապետությունների Միության Միացյալ Պետական Քաղաքական Վարչությունը ղեկավարում է Պետական Քաղաքական Վարչության տեղական մարմինների (ԳՊՈՒ) աշխատանքները դաշնակից հանրապետությունների ժողովական կոմիսարների խորհուրդներին կից գտնվող լիազորների միջոցով, վորոնք գործում են որենադրական կարգով հաստատված հատուկ կանոնադրության հիման վրա:

63. Խորհրդային Սոցիալիստական Հանրապետությունների Միության Միացյալ Պետական Քաղաքական Վարչության գործողությունների որինականության հսկողությունն իրագործում է Խորհրդային Սոցիալիստական Հանրապետությունների Միության Պերագույն Դատարանի դատախազը՝ Խորհրդային Սոցիալիստական Հանրապետությունների Միության Կենտրոնական Գործադրի Կոմիտեի հատուկ վորոշման հիման վրա:

#### ԳԼՈՒԽ ՏԱՄԵՐՈՐԴԻ

ԴԱՅԱԿԱՆ ՀԱՅԱՍՏԱՆԻ ԹԱՅԻՆ

64. Յուրաքանչյուր դաշնակից հանրապետության տերիտորիայի սահմաններում նրա իշխանության գերազույն մարմինն և հանդիսանում հանրապետության խորհուրդների համագումարը, իսկ համագումարների միջանկյալ ժամանակամիջոցներում՝ նրա կենտրոնական գործադրի կոմիտեն:

65. Դաշնակից հանրապետությունների իշխանության գերազույն մարմինների և Խորհրդային Սոցիալիստական Հանրապետությունների Միության իշխանության գերազույն մարմինների փոխհարաբերությունները սահմանվում են այս Սահմանադրությամբ:

66. Դաշնակից հանրապետությունների կենտրոնական գործադրի կոմիտեներն իրենց կազմից ընտրում են նախագահություններ, վորոնք կենտրոնական գործադրի կոմիտեների նստաշրջանների միջանկյալ ժամանակամիջոցում հանդիսանում են իշխանության գերազույն մարմիններ:

67. Դաշնակից հանրապետությունների կենտրոնական գործադրի կոմիտեները կազմում են իրենց գործադրի մարմինները—ժողովրդական կոմիսարների խորհուրդները, — հետեւյալ կազմով.

Ժողովրդական կոմիսարների խորհրդի նախագահ.  
Նախագահի տեղականներ.

Պետական սլանային հանձնաժողովի նախագահ.  
Ժողովրդական անտեսության գերազույն խորհրդի նախագահ.

Հողագործության ժողովրդական կոմիսար.  
Փինանսների ժողովրդական կոմիսար.

Ճատակարարման ժողովրդական կոմիսար.  
աշխատանքի ժողովրդական կոմիսար.

արդարադատության ժողովրդական կոմիսար.  
բանվորա-գյուղացիական տեսչության ժողովրդական կոմիսար.

լուսավորության ժողովրդական կոմիսար.  
առողջապահության ժողովրդական կոմիսար.

սոցիալական ապահովության ժողովրդական կոմիսար.  
ինչպես նաև՝ խորհրդակցական կամ վճռական ձայնի իրավունքով՝ գաշնակից հանրապետությունների կենտրոնական գործադրի կոմիտեների վրացումով — Խորհրդային Սոցիալիստական Հանրապետությունների Միության արտաքին գործերի, սազմական և ծովային գործերի, արտաքին առևտուրի, հաղորդակցության ճանապարհների, ջրային տրանսպորտի և փոստ ու հեռագրատների ժողովրդական կոմիսարիատների լիազորները:

68. Դաշնակից հանրապետությունների ժողովրդական անտեսության գերազույն խորհուրդները և հողագործության, ճատակարարման, ֆինանսների, աշխատանքի ու բանվորա-գյուղացիական տեսչության ժողովրդական կոմիսարիատները, յենթարկվելով՝ գաշնակից հանրապետությունների կենտրոնական գործադրի կոմիտեներին և ժողովրդական կոմիսարների խորհուրդներին, իրենց գործունեյության ընթացքում իրականացնում են Խորհրդային Սոցիալիստական Հանրապետությունների Միության համապատասխան ժողովրդական կոմիսարիատների գիրեկտիվները:

69. Դաշնակից հանրապետությունների դատական և վարչական մարմինների կողմից դատավարական քաղաքացիների նկատմամբ ամնիստիայի իրավունքը, ինչպես և մասնակի ներման ու նախկին վիճակում հաստատելու իրավունքը վերապահնվում է այդ հանրապետությունների կենտրոնական գործադրի կոմիտեներին:

## ԳԼՈՒԽ ՏԱՄԱԿԻՆ ԵՐԱՐԾՈՂ

ԽՈՐՀԻՐԴԱՅԻՆ ՍՈՅԻԱՀԱՍՏԱԿԱՆ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ՄԻՈՒԹՅԱՆ ՊԵՏԱԿԱՆ  
ԳԵՐԲԻ, ԴՐԱՅԱԿԻ ՅԵՎ ՄԱՅՐԱՔԱՂԱՔԻ ՄԱՅԻՆ

70. Խորհրդային Սոցիալիստական Հանրապետությունների Միության պետական գերբը բաղկացած ե' արևի ձառագայթներում և հասկերով շվանակված յերկրադարձի վրա պատկերած մուրճ ու մանդալից, զաշնակից հանրապետությունների ընդհանուր գործածական լեզուներով՝ «Պրոլետարներ, բուռո՛ յերկրների, միացեք!» մակարությամբ։ Պետական գերբի վերին մասում գտնվում ե' հնգամայր աստղը։

71. Խորհրդային Սոցիալիստական Հանրապետությունների Միության պետական դրոշակը բաղկացած ե' կարմիր կամ ալ գույնի կտակից, վորի վերևի անկյունում, ձողի մոտ, պատկերած ե' վոսկե մուրճն ու մանդալը և նրանցից վերև՝ վոսկե յեղբով շրջանակված հնգամայր կարմիր աստղը։ Լայնության և յերկարության հարաբերականն ե' 1:2։

72. Խորհրդային Սոցիալիստական Հանրապետությունների Միության մայլաքաղաքը Մուկվան ե:

Խորհրդային Սոցիալիստական Հանրապետությունների Միության  
Խորհուրդների 2-րդ Համագումարի նախագահ՝ Մ. ԿԱԼԻՆԻՆ

Խորհրդային Սոցիալիստական Հանրապետությունների Միության  
Խորհուրդների 2-րդ Համագումարի Քարտուղար՝ Ա. ՅԵՆՈՒԿԻՉՅԵ


Մոսկավա  
1924 թ. հունվարի 31

Խորհրդային Սոցիալիստական Հանրապետությունների  
Միության Հիմնական Որենքի (Սահմանադրության) այս  
տեքստը տպագրված ե Խորհրդային Սոցիալիստական Հանրա-  
պետությունների Միության խորհուրդների 2-րդ համագու-  
մարի կողմից 1924 թ հունվարի 31 հաստատված խմբա-  
գրությամբ և այն լրացումներով ու փոփոխություններով,  
վոր Խորհրդային Սոցիալիստական Հանրապետությունների  
Միության Հիմնական Որենքի (Սահմանադրության) տեքս-  
տի մեջ մտցրել են։

1925 թ. մայիսի 20-ին ԽՍՀ Միության Խորհուրդների 3-րդ համագումարը,  
1927 թ. ապրիլի 26-ին ԽՍՀ Միության Խորհուրդների 4-րդ համագումարը, և  
1931 թ. մարտի 17-ին ԽՍՀ Միության Խորհուրդների 6-րդ համագումարը,



ԽՈՐՀՐԴԱՅԻՆ ՍՈՅԻԱՀԱՍՏԱԿԱՆ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ՄԻՈՒԹՅԱՆ  
ՊԵՏԱԿԱՆ ԳԵՐԲԻ



ԽՈՐՀՐԴԱՅԻՆ ՍՈՅԻԱՀԱՍՏԱԿԱՆ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ՄԻՈՒԹՅԱՆ  
ՊԵՏԱԿԱՆ ԴՐԱՅԱԿԻ





ՀՀ Ազգային գրադարան



NL0206305

34 683

2995

112 / 1337